ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2016թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻՀՐԱՆ ԷԴԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2798-րդ տարեդարձի առթիվ, սպորտի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, միջազգային մրցասպարեզներում ունեցած ակնառու հաջողությունների և տարած փայլուն հաղթանակների համար հունահռոմեական ոճի ըմբշամարտիկ, Ռուսաստանի և Հայաստանի չեմպիոն, Եվրոպական խաղերի արծաթե մեդալակիր, 2016 թվականի ամառային օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, Ռուսաստանի միջազգային կարգի սպորտի վարպետ Միհրան Էդիկի Հարությունյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԻՀՐԱՆ ԷԴԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միհրան Էդիկի Հարությունյանը ծնվել է 1989 թվականի մարտի 25-ին, Էջմիածնում:

1996 թվականին հաճախել է Էջմիածնի թիվ 3 միջնակարգ դպրոցը:

1999 թվականին ընտանիքի հետ տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք:

1999-2006 թվականներին սովորել և ավարտել է Մոսկվայի թիվ 717 միջնակարգ դպրոցը:

2000 թվականից Մոսկվայի օլիմպիական ավանում զբաղվել է հունահռոմեական ըմբշամարտով:

2006 թվականին նա դարձել է Եվրոպայի պատանիների առաջնության հաղթող: 2008 և 2009 թվականներին նա արժանացել է մեդալների՝ աշխարհի պատանեկան առաջնություններում:

2007 թվականին ընդունվել է Մոսկվայի պետական համալսարանի «Կապ և տրանսպորտ» բաժանմունքը:

2001 թվականին Ռուսաստանի առաջնության ժամանակ նվաճել է արծաթե մեդալ և հաղթել է Իսպանիայում և Շվեդիայում միջազգային մրցաշարարերի ժամանակ: 2011 թվականին արժանացել է միջազգային կարգի սպորտի վարպետի կոչմանը:

2012 թվականից տեղափոխվել է Հայաստան և մինչ օրս հանդես է գալիս Հայաստանի հունահռոմեական ըմբշամարտի հավաքականի կազմում:

2013 թվականին դարձել է Հայաստանի չեմպիոն:

2016 թվականին Ռիո Դե Ժանեյրոյում կայացած օլիմպիական խաղերի ժամանակ դարձել է արծաթե մեդալակիր:

Ելնելով վերգրյալից և հաշվի առնելով Միհրան Հարությունյանի ներդրած ավանդը սպորտի զարգացման գործում, ինչպես նաև միջազգային մրցասպարեզներում ունեցած ակնառու հաջողությունները և տարած հաղթանակները՝ առաջարկվում է Միհրան Էդիկի Հարությունյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԻՀՐԱՆ ԷԴԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Միհրան Էդիկի Հարությունյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄԻՀՐԱՆ ԷԴԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Միհրան Էդիկի Հարությունյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ